ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՂԱԲԱԲՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՀԱԿՈԲԻ

# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱԶԳԱՑՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ

ԺԳ.00. 02 - «Դաստիարակության և դասավանդման մեթոդիկա (հայոց լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

## ՍԵՂՄԱԳԻՐ

Ե Ր Ե Վ Ա Ն 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

| | |
|---|---|
| **Գիտական ղեկավար՝** | մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ս.Տ. Վարդումյան** |
| **Գիտական խորհրդատու՝** | փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ.Զ. Ջիջյան** |
| **Պաշտոնական Ընդդիմախոսներ՝** | բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Մ. Խաչատրյան** |
| | մանկավարժական գիտությունների թեկնածու **Գ. Վ. Մկրտչյան** |
| **Առաջատար կազմակերպություն** | Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան |

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. մարտի 17-ին ժամը $12^{00}$–ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ-ի փետրվարի 17-ին

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Հ. Սվաջյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:**

Գրեթե ողջ աշխարհում 20-րդ դարավերջից սկսած տեղի են ունենում կրթական բարեփոխումներ՝ պայմանավորված ինչպես ներկա, այնպես էլ ապագա հասարակության կողմից առաջադրվող պահանջներով: Ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ են ստեղծագործաբար մտածող, ինքնակատարելագործման ձգտող, փոփոխվող պայմաններում արագ կողմնորոշվող, բազմակողմանի զարգացած մասնագետներ, ինչը կրթական համակարգից պահանջում է մի շարք կարևորագույն խնդիրների առաջնահերթ լուծում, այն է՝ տեսական գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու, դրանք գործնականում կիրառելու կարողությունների զարգացում, լեզվական, տրամաբանական, ստեղծագործական, քննադատական, վերլուծական մտածողության, լեզվազգացողության ձևավորում ու շարունակական զարգացում: Նշված խնդիրների լուծումը ենթադրում է համակցված բարեփոխումների իրականացում հանրակրթության և բուհական համակարգերում: Հետևաբար, բարեփոխումների շրջանակներում կենտրոնական տեղ են զբաղեցնում գործող ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումը և որակյալ, ժամանակի պահանջներին համահունչ ուսուցիչների նոր սերնդի պատրաստումը: Այդ տեսանկյունից կարևոր է ապագա ուսուցչի լեզվահաղորդակցական կոմպետենցիայի զարգացումը, նրա կողմից լեզուների յուրացման լեզվաբանական, մանկավարժական, հոգեբանական հայեցակետերի ուսումնասիրումը (Ա.Ե. Տեր-Գրիգորյան, Ս.Գ. Աբրահամյան, Ջ.Հ. Գյուլամիրյան, Էդ. Ջրբաշյան, Լ.Մ. Խաչատրյան), լեզվազգացողության մակարդակի բարձրացումը (Յու.Դ. Ապրեսյան, Մ.Մ. Գոհլերներ, Գ.Վ. Էյգեր, Ի.Տ. Վասիլևա, Ա.Ս. Բուգա, Լ.Ի. Բոժովիչ, Ե.Դ. Բոժովիչ, Լ.Ս. Վիգոտսկի, Դ.Ս. Պալերմո, Ե.Մ. Վերեշչագին և այլք):

*Լեզվազգացողության ձևավորման և զարգացման խնդիրը* խոր արմատներ ունի: Դեռևս անտիկ շրջանի ճարտասանների պատրաստման համակարգում կենտրոնական տեղ են զբաղեցրել լեզվազգացողության զարգացումը, անհրաժեշտ հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու շարունակական զարգացումը, գրավոր և բանավոր խոսքի նրբերանգներն ընկալելու և գործնականում կիրառելու հմտությունների ձևավորումը:

Լեզվազգացողության էությունը, դրսևորման առանձնահատկությունները, գործառույթները և այլն հետևողականորեն սկսել են ուսումնասիրվել 20-րդ դարի սկզբներից (Մ.Մ. Գոլիերներ, Գ.Վ. Էյգեր, Ֆ. Կայնց, Լ.Ի Բոժովիչ և այլք) և այսօր էլ մնում են հետազոտողների ուշադրության կենտրոնում (Ի.Տ. Վասիլևա, Ե.Դ. Բոժովիչ, Ե.Մ. Վերեշչագին, Ե. Ի. Գորոշկո, Վ. Ա. Դոլինսկի, Օ. Ա. Լեբեդևա և այլք):

Հայ իրականության մեջ լեզվաբանները, մեթոդիստ-մանկավարժները, հոգեբանները, փիլիսոփաները (Ա.Ե. Տեր-Գրիգորյան, Ս.Գ. Աբրահամյան, Ջ.Հ. Գյուլամիրյան, Էդ. Ջրբաշյան, Յու.Դ. Ապրեսյան, Լ.Մ. Խաչատրյան, Գ. Բրուտյան, Ռ. Ջիջյան), գիտակցելով և ընդգծելով լեզվազգացողության զարգացման կարևորությունը, իրենց հետաքրքրությունների շրջանակներում, թեկուզ և թռուցիկ, անդրադարձել են այդ խնդրին, սակայն համալիր հետազոտություններ այդ ուղղությամբ ցայսօր չեն կատարվել:

Ներկայացվող ատենախոսությունը նվիրված է սովորողների լեզվազգացողության համալիր ուսումնասիրմանը և դրա զարգացման տեխնոլոգիաների մշակմանը:

**Հետազոտության նպատակն է.** բացահայտել և վեր հանել տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակը, մշակել լեզվազգացողության մակարդակի բարձրացմանն ուղղված տեխնոլոգիաներ, փորձարկել և հիմնավորել վերջիններիս արդյունավետությունն ուսուցման գործընթացում:

**Հետազոտության օբյեկտն է.** լեզվազգացողության ներուժի զարգացման գործընթացը:

**Հետազոտության առարկան է.** տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացման մեթոդական համակարգը:

**Հետազոտության աշխատանքային վարկածը:**

1. Լեզվազգացողությունն իր հիմնական դրսևորումներով (մայրենի լեզվի հարուստ բառապաշարի առկայություն, գեղարվեստական պատկերավորման միջոցների, տարածված դարձվածքների համարժեք ընկալում ու կիրառման հմտություն և այլն) ապագա ուսուցչի աշխարհընկալման, ինքնադրսևորման, ինքնազարգացման, ստեղծագործական կարողությունների և հաղորդակցական կոմպետենցիաների ձևավորման ու զարգացման կարևորագույն գործոն է:
2. Առաջարկվող բազմագործոն տեխնոլոգիաների կիրառումը ապագա ուսուցչի պատրաստման գործընթացում կբարձրացնի նրա լեզվազգացողության մակարդակը:
3. Բառային զուգորդությունների գիտափորձի (ԲԶԳ) մեթոդը սովորողների լեզվազգացողության մակարդակի բացահայտման ու դրա բարձրացման ուղիների որոշման, նրանց զուգորդական-իմաստաբանական դաշտերի զարգացման շարժընթացի հետազոտման արդյունավետ գործիք է:
4. Առաջարկվող տեխնոլոգիաների կիրառումն ուսանողների կողմից (համապատասխան պատրաստություն անցնելուց հետո) տարրական դպրոցում՝ համապատասխանեցնելով դրանք ուսումնական ծրագրերին, կբարձրացնի նաև աշակերտների լեզվազգացողության մակարդակը:

**Հետազոտության խնդիրներն են:**

1. Ուսումնասիրել թեմային առնչվող մասնագիտական գրականությունը, այն է՝ լեզվազգացողության տեսական հիմքերը, հիմնական դրսևորումները, դրա մակարդակի բարձրացման մեխանիզմներն ուսումնական գործընթացում:
2. Բացահայտել և վեր հանել տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակը ԲԶԳ մեթոդի միջոցով:
3. Մշակել տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի բարձրացմանն ուղղված բազմագործոն տեխնոլոգիաներ:
4. Կիրառել մշակված բազմագործոն տեխնոլոգիաները տարրական դասարանների ապագա ուսուցչի պատրաստման գործընթացում:
5. Ստուգել տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացման աստիճանը մշակված տեխնոլոգիաների կիրառման արդյունքում:
6. Ստուգել տարրական դասարանների ապագա ուսուցչի կողմից առաջարկվող տեխնոլոգիաները կենդանի ուսումնական գործընթացում (մանկավարժական պրակտիկայի ընթացքում) կիրառելու կարողությունները:
7. Ստուգել աշակերտների լեզվազգացողության զարգացման աստիճանը առաջարկվող բազմագործոն տեխնոլոգիաները ապագա ուսուցչի կողմից տարրական դպրոցում կիրառելու արդյունքում:

**8. Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են.**
անձի լեզվամտածողության, լեզվազգացողության, լեզվական-հաղորդակցական կոմպետենցիաների ձևավորման ու զարգացման լեզվաբանական, հոգելեզվաբանական, մանկավարժամեթոդական, հոգեբանական, փիլիսոփայական գաղափարները, հայեցակարգերն ու տեսությունները: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության համար կարևոր նշանակություն են ունեցել Յու.Դ. Ապրեսյանի, Ե.Դ. Բոժովիչի, Մ.Մ. Գոհլերների, Ա.Ս. Բուգայի, Ի.Տ. Վասիլևայի ուսումնասիրությունները, դրանցում առաջադրված գաղափարները, տեսակետներն ու դրույթները: Ստացված արդյունքները մշակվել են՝ հիմք ընդունելով Պ. Անդերսենի, Ջ. Մորգանի, Ն. Հենրիի, Ա.Ա. Լեոնտևի աշխատանքներում զարգացված դասակարգման ու վերլուծության եղանակները:

**Հետազոտության ընթացքում կիրառվել են.**

- գիտամանկավարժական ուսումնասիրության գրեթե բոլոր մեթոդները՝ դիտում, անկետավորում, դպրոցական փաստաթղթերի ուսումնասիրում, մանկավարժական թեստավորում, գիտափորձ, սովորողների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքների վերլուծություն, զրույց ուսանողների, աշակերտների, ուսուցիչների, հետազոտության առարկային հարող տարբեր ոլորտների մասնագետների՝ լեզվաբանների, հոգեբանների, մանկավարժ-մեթոդիստների, փիլիսոփաների հետ և այլն,
- բառային զուգորդությունների գիտափորձի մեթոդը,
- փորձարարական տվյալների քանակական վերլուծության նպատակով կիրառվել են մաթեմատիկական վիճակագրության մեթոդները՝ օգտագործելով *Mathematica* և *Origin* ծրագրային փաթեթները:

**Հետազոտության գիտական նորույթը.**

հայ իրականության մեջ առաջին անգամ՝

- հստակեցվել է լեզվազգացողության սահմանումը,
- մշակվել է լեզվազգացողության մակարդակի բարձրացման տեխնոլոգիաների կիրառման մոդել,
- կիրառվել է ԲՁԳ մեթոդը՝ տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի աստիճանականությունը որոշելու նպատակով,
- կիրառվել են մշակված տեխնոլոգիաները տարրական դասարանների ուսուցիչների պատրաստման գործընթացում,
- փորձարկվել են մշակված տեխնոլոգիաները տարրական դպրոցում,
- կատարվել է սովորողների զուգորդական-իմաստաբանական դաշտերի զարգացման շարժընթացի որակական և քանակական վերլուծություն:

**Հետազոտության տեսական նշանակությունը:**

Լեզվազգացողության զարգացումը խթանող բազմագործոն տեխնոլոգիաների կիրառման արդյունքների վերլուծությունները լրացնում են լեզվի դասավանդման, մասնավորապես՝ հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի բնագավառում առկա տեսությունները: Հետազոտության արդյունքում բացահայտված օրինաչափություններն ու հատկանշական առանձնահատկությունները կարող են օգտակար լինել լեզվաբանական, հոգեբանական, լեզվափիլիսոփայական տեսական ուսումնասիրություններում:

**Հետազոտության գործնական նշանակությունը.**

1. առաջարկվող բազմագործոն տեխնոլոգիաները կարող են կիրառվել.
   - մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացներում՝ նպաստելով՝

ա) ուսանողների լեզվազգացողության մակարդակի աստիճանական բարձրացմանը,
բ) մանկավարժական պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը,

- հանրակրթական հաստատություններում՝ նպաստելով աշակերտների լեզվազգացողության, լեզվամտածողության, հաղորդակցական կոմպետենցիաների զարգացմանը:

2. Լեզվազգացողության զարգացմանն ուղղված բազմագործոն տեխնոլոգիաները կարող են հիմնարար նյութ հանդիսանալ հատուկ և ընտրովի դասընթաց (սեմինար) մշակելու և մանկավարժական բուհի ուսումնական գործընթաց ներմուծելու համար:
3. ԲԶԳ մեթոդով ստացված տվյալները կարող են հիմնարար նյութ հանդիսանալ հայերենի զուգորդական նորմերի բառարան ստեղծելու համար:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները:**

1. Լեզվազգացողության բարձր մակարդակը ապագա ուսուցչի արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր նախադրյալ է:
2. ԲԶԳ մեթոդը սովորողների լեզվազգացողության մակարդակի բացահայտման, նրանց զուգորդական-իմաստաբանական դաշտերի ուսումնասիրման և զարգացման շարժընթացի հետազոտման արդյունավետ գործիք է:
3. Առաջարկվող բազմագործոն տեխնոլոգիաների կիրառումն ապահովում է՝
   - տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի շարունակական բարձրացումը,
   - ուսումնական գործընթացում նույն տեխնոլոգիաների կիրառման կարողությունների ձևավորումը,
   - տարրական դպրոցի աշակերտների լեզվազգացողության մակարդակի բարձրացումը:

**Հետազոտության փորձարարական բազան:** Գիտափորձերն անցկացվել են.

- ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետում,
- ՀՊՄՀ մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում,
- Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 դպրոցում:

**Հետազոտության արդյունքների փորձաքննությունն** իրականացվել է ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստում, զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի սեմինարում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հետազոտության արդյունքներն արտացոլվել են 9 գիտական հոդվածներում:

**Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով:**

**Առաջին փուլում** ուսումնասիրվել է մասնագիտական գրականությունը, վեր են հանվել լեզվազգացողության լեզվաբանական, փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական հիմքերը: Վերլուծության է ենթարկվել լեզվազգացողության զարգացման հիմնախնդիրը լեզվի պատմական զարգացման ընթացքում, ձևակերպվել են սովորողների լեզվազգացողության մակարդակի բարձրացման արդի խնդիրները: Նախանշվել են տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի բարձրացմանն ուղղված տեխնոլոգիաների մշակման ուղիները: Հստակեցվել են հիմնական հասկացությունները, որոնք կիրառվել են հետազոտության հիմնախնդիրը, վարկածն ու խնդիրները սահմանելիս: Սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները:

**Երկրորդ փուլում** քննարկվել են ուսանողների լեզվազգացողության չափանիշները, լեզվազգացողության մակարդակի ուղղորդված բարձրացման միջոցները՝ խոսք կառու-

ցելու կարողությունների ձևավորում, գրական լեզվի արտահայտչամիջոցների, մանրապատում ստեղծագործությունների, արևմտահայ գրական տեքստերի կիրառում, օտար լեզուներից թարգմանական աշխատանքների կատարում: Ուսանողների լեզվազգացողության մակարդակի ուղղորդված շարունակական բարձրացման նպատակով առաջարկվել է պարզ, միջին բարդության և բարդ առաջադրանքների համախումբ:

**Երրորդ փուլում** կիրառվել են ուսանողների լեզվազգացողության զարգացմանն ուղղված տեխնոլոգիաները ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի 3-րդ կուրսում: Իրականացվել է տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացման շարժընթացի համալիր ուսումնասիրություն ԲՋԳ մեթոդի կիրառմամբ, և ստուգվել է կիրառված տեխնոլոգիաների արդյունավետությունը: Մշակված տեխնոլոգիաների արդյունավետությունը հաստատելու նպատակով նույն տեխնոլոգիաները կիրառվել են մեր ուսանողների՝ ապագա ուսուցիչների կողմից տարրական դպրոցում: Ստացված արդյունքների չափումները հաստատել են նաև տարրական դասարանների աշակերտների լեզվազգացողության մակարդակի բարձացումը:




Գծ.1. Ուսանողների լեզվազգացողության զարգացման տեխնոլոգիաների բլոկ-սխեման

Աշխատանքում ներկայացված համալիր հետազոտությունների փուլերը՝ ուսանողների լեզվազգացողության մակարդակի որոշում ԲՋԳ մեթոդով, գիտելիքների ստուգում տարբերակված թեստերով և այլն, սխեմատիկորեն ներկայացված են գծ.1-ում:

**Աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Այն պարունակում է 8 գծապատկեր, 1 տրամագիր և 13 աղյուսակ: Ընդհանուր ծավալը՝ 137 համակարգչային էջ:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, աշխատանքային վարկածը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

**Առաջին՝** ***Լեզվազգացողության հիմնախնդրի տեսական վերլուծություն*** **գլխում** քննարկվել են լեզվի և մտածողության, լեզվի և հաղորդակցության, խոսքի և մտածողության փոխառնչությունները՝ ելնելով ժամանակակից գիտական գրականության մեջ հաճախակի արծածվող այն թեզից, որ *լեզվազգացողությունը լեզվամտածողության* հատուկ, ներզգացողական մեխանիզմ է: Այն կապված է յուրահատուկ ընդհանրացումների տարբեր տեսակների հետ, որոնք իրականացվում են անկախ քերականական հասկացությունների և հարաբերությունների իմացությունից:

Դիտարկվել են լեզվազգացողության վերաբերյալ գիտական գրականության մեջ գոյություն ունեցող մանկավարժամեթոդական, լեզվաբանական, հոգելեզվաբանական, լեզվափիլիսոփայական մոտեցումները: Դրանց համեմատական վերլուծության միջոցով վեր է հանվել լեզվազգացողության էությունը՝ սահմանելով այն *որպես գիտակցական-տրամաբանականի և ենթագիտակցական-ներզգացողականի տարրերով միահյուսված ու լեզվագործածության ընթացքում դրսևորվող գործընթաց, որն ապահովում է անհատի հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումը և խթանում դրա շարունակական զարգացումը:*

Համալիր վերլուծության է ենթարկվել *լեզվազգացողության* ձևավորման ու զարգացման մեթոդական համակարգը, որը կառուցված *է գիտականության, մատչելիության, գիտակցականության, մասնագիտական ուղղվածության* սկզբունքների հենքի վրա: Ելնելով դիտարկվող խնդրի նպատակից՝ կարևորվել են հատկապես *մասնագիտական ուղղվածության և հաղորդակցականության* սկզբունքները, քանի որ վերջիններիս հենքի վրա կազմակերպվող ուսուցումը խթանում է բառային միավորների գրագետ կիրառման կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

**Երկրորդ՝** ***Տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացման միջոցները*** **գլխում** քննարկվել են ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի ուղղորդված բարձրացման միջոցները՝ խոսք կառուցելու կարողությունների ձևավորման գործընթացում կարևորելով գրական լեզվի արտահայտչամիջոցների, մանրապատում ստեղծագործությունների, արևմտահայ գրական տեքստերի կիրառումը, օտար լեզուներից թարգմանական աշխատանքներ կատարելը:

Լեզվազգացողության մակարդակի բարձրացմանն ուղղված ուսումնական տեքստեր կազմելիս առաջնորդվել ենք հետևյալ քայլերով. նախ ներկայացրել ենք համապատասխան օրինակներ, որպեսզի ուսանողը գործնականում տիրապետի տվյալ պատկերավորման միջոցին, այնուհետև ընտրել ենք համալիր ուսումնական տեքստեր (այդ թվում՝ հատվածներ դասական գրականությունից, մանկագրությունից և այլն)՝ պատկերավորման միջոցների նշված խմբին տիրապետելու կարողություններ զարգացնելու համար:

Ապագա ուսուցչի բառապաշարը հարստացնելու նպատակով առաջարկվել են ուսումնական տեքստեր, որտեղ ներառված յուրաքանչյուր հաջորդ նյութ նախորդի օրգանական շարունակությունն է և ապահովում է ուսուցչի մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բառապաշարի հենքային մակարդակը: Մշակված ուսումնական տեքստերն ուսանողին անուղղակիորեն հուշում են բառերի ու բառաձևերի,

գեղարվեստական պատկերավորման միջոցների կիրառման նրբությունները տարբեր համատեքստերում և խոսքային տարբեր իրավիճակներում: Ներկայացվել են նաև թեստային առաջադրանքների օրինակներ, որոնք ուղղված են բառիմաստների ընկալման, յուրացման ու կիրառման մակարդակի ստուգմանը:

Քննարկվել են հանրաճանաչ մանկական երգերը՝ որպես տարրական դասարանների արպագա ուսուցչի, իսկ նրա միջոցով՝ նաև աշակերտի լեզվազգացողության զարգացման արդյունավետ միջոց: Մանկական ֆիլմերից հայտնի երգերը, ներգործելով սովորողի հուզաշխարհի վրա, նպաստում են պատկերավոր արտահայտությունների և լեզվի արտահայտչամիջոցների ընկալմանը նաև սիրված երգերի միջոցով:

Առաջարկվող ուսումնական նյութերը փորձարկվել են ՀՊՄՀ սզբնական կրթության ֆակուլտետի (բակալավրի կրթական ծրագրի) առկա և հեռակա ուսուցման տարբեր կուրսերում գործնական պարապմունքների ընթացքում: Գրավոր և բանավոր հարցումների արդյունքները ցույց են տվել, որ դրանք էապես նպաստում են լեզվի արտահայտչամիջոցների մասին տեսական գիտելիքների ամրապնդմանը, լեզվազգացողության մակարդակի բարձրացմանը, արդյունքում՝ բառագործածության հմտությունների զարգացմանն ու նաև ընթերցողական ճաշակի ձևավորմանը:

Դիտարկվել է օտարալեզու գրական տեքստերից թարգմանական աշխատանքների կատարման դերը ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի բարձրացման գործում: Դրանք նպաստում են սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, դաստիարակում ճանաչողական հետաքրքրություն ոչ միայն մայրենի, այլև օտար լեզուների հանդեպ:

Համատեքստը ճշգրիտ ըմբռնելու և մայրենի լեզվով ներկայացնելու հմտություններ զարգացնելու, ինչպես նաև մասնագիտական ոլորտում գոյություն ունեցող գիտական, գիտամեթոդական նորություններին հաղորդակցվելու նպատակով ուսանողներին հանձնարարվել է փոքրածավալ թարգմանություններ կատարել ինչպես գեղարվեստական, այնպես էլ մասնագիտական գրականությունից: Թարգմանելու ընթացքում բառերի, արտահայտությունների, քերականական կառույցների համեմատական վերլուծությունը զարգացնում է սովորողի լեզվազգացողությունը, ինչն էլ անդրադառնում է նրա խոսքի մշակույթի զարգացման, գեղագիտական ճաշակի ձևավորման, մայրենի լեզվի հարստության գիտակցման վրա:

Քննարկվել է սովորողների լեզվազգացողության զարգացման կարևորությունը նաև արևմտահայ գրական տեքստերի միջոցով: Դ. Վարուժանի «*Ծաղկեփունջ*» ժողովածուից ընտրված օրինակներով ցույց է տրվել, որ չնայած արևմտահայերենում գոյություն ունեն մեզ համար անհասկանալի բառեր, արևելահայերենից տարբեր բառաձևեր (օր.՝ գեղոգեղեցկության, *ողջույն ընդ քեզ-ողջույն, արթընցած-արթնացած*), սակայն բառիմաստները հեշտ են ընկալվում, եթե ուսումնական գործընթացում կիրառվում են արևմտահայ հեղինակների մանկագրության նմուշներ: Ուսանողներին հանձնարարվել է առաջարկվող բնագրից դուրս բերել բառաձևեր, կազմել դրանց համարժեքներն արևելահայերենում, ցույց տալ գրության, արտասանության, իմաստային ու նրբիմաստային տարբերությունները:

Կարծում ենք, նմանատիպ առաջադրանքների կիրառումն արդյունավետ է նաև տարրական դպրոցում (արտադասարանային միջոցառումների, վիկտորինաների ժամանակ), ինչը պարարտ հող կստեղծի՝ արևմտահայ գրականությունը բարձր դասարաններում հեշտությամբ ընկալելու համար:

**Երրորդ՝** ***Լեզվազգացողության մակարդկի բացահայտումը և զարգացման շարժընթացի***

***փորձարարական հետազոտումը*** **գլխում** դիտարկվել է ԲՁԳ մեթոդը՝ որպես ուսանողի լեզվազգացողության մակարդակի շարժընթացի ուսումնասիրման արդյունավետ գործիք:

**Առաջին ենթագլխում** նկարագրվել է ԲՁԳ մեթոդն իր տարատեսակներով՝ ազատ, ուղղորդված, միա – և բազմափուլ: Քննարկվել են ձևաբանական (*պարադիգմատիկ*) և շարահյուսական (*սինտագմատիկ*) զուգորդությունները, դրանց տիպերը: Պարզաբանվել են բառային զուգորդությունների տեսության կարևոր հասկացությունները՝ *բառ–խթան, հակազդում, իմաստաբանական դաշտ*, *զուգորդական դաշտ* և այլն, որոնք հաջորդիվ կիրառվել են ուսանողների լեզվազգացողության զարգացման ու մակարդակի բարձրացման մեխանիզմների ուսումնասիրման ընթացքում:

**Երկրորդ ենթագլխում** դիտարկվել է ԲՁԳ մեթոդը՝ որպես լեզվազգացողության մակարդակի բացահայտման տեխնոլոգիա: Ներկայացվել են սովորողների լեզվազգացողության մակարդակի և դրա բարձրացման շարժընթացի որոշման՝ մեր կողմից իրականացված հետազոտությունները և դրանց արդյունքում ստացված փորձարարական տվյալները: Առաջարկվել է լեզվազգացողության մակարդակի և դրա շարժընթացի գնահատման եղանակ, որն իրականացվել է երկու փուլով:

***Առաջին փուլում*** ԲՁԳ մեթոդով ուսումնասիրվել են ուսանողների զուգորդական դաշտերը, բացահայտվել դրանց հատումները: Գիտափորձին մասնակցել է 2-րդ և 3-րդ կուրսերի 64 ուսանող: *Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանից* ընտրված 200 ամենահաճախադեպ բառեր (100 գոյական, 60 բայ և 40 ածական)՝ որպես բառ-խթաններ, թելադրվել են ուսանողներին՝ առաջարկելով դրանց հակազդել միտքը եկած առաջին բառով: Ստացված հակազդումները վերլուծվել են՝ հիմք ընդունելով *Վուդվորտսի քերականական կարգերի բաշխումը*: Գոյական (N), բայ (V) և ածական (A) բառ–խթանների հակազդումները դասակարգվել են ըստ N, V և A քերականական կարգերի, ինչպես նաև նախադասությունների (*ն.*) և բառակապակցությունների (*բկ*) (աղյ.1): Երևում է, որ բոլոր դեպքերում հակազդումներում գերիշխում են ձևաբանական զուգորդությունները (N→N, V→V)՝ բացառությամբ A բառ–խթանների, որոնց հակազդումների 42%–ը գոյականներ են՝ A→N: Նկատենք, որ N→N, V→V զուգորդությունների բաշխումն անհամաչափ է. V→N զուգորդությունները կազմում են 12.2%, մինչ N→V զուգորդությունները՝ 3 % (աղյ.1):

Աղյուսակ 1

Զուգորդությունների դասակարգումն ըստ քերականական կարգերի

| մասնագի-տություն | բառ–խթան՝ N | | | | բառ–խթան՝ V | | | | բառ–խթան՝ A | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | N | A | V | ն. (բկ) | N | A | V | ն. (բկ) | N | A | V | ն. (բկ) |
| մաթեմատիկա % | 78.4 | 6.7 | 3.0 | 0.5 (10.3) | – | – | – | – | – | – | – | - |
| սուրդոմանկա-վարժություն., % | 54.8 | 18.2 | 2.4 | 5.5 (16.5) | 12.2 | 3.7 | 18.0 | 42.0 (24.1) | 42.0 | 13.3 | 3.8 | 22.2 (18 ) |

Հարկ է նշել, որ բերված տվյալները հիմնականում համընկնում են Դ.Ս. Պալերմոյի տվյալներին, համաձայն որոնց՝ *N–խթանները* 77% դեպքում առաջացնում են ձևաբանական, իսկ *V–խթանները* 58% դեպքում՝ շարահյուսական զուգորդություններ: Որակական համընկնում է նկատվում նաև մեր և Վուդվորտսի կողմից ստացված տվյալների միջև. N→N՝ 70%, N→V՝ 8%, N→A՝ 20%, V→N՝ 50%, A → N՝ 45%:

Հետազոտությունների *երկրորդ փուլում* ԲՁԳ մեթոդով ուսումնասիրվել է տարրական դասարանների ապագա ուսուցչի արժեհամակարգի ձևավորման համար կարևոր

հայտանիշներից մեկի՝ քաղաքացիականության (civicism) մակարդակի փոփոխման շարժընթացը լեզվազգացողության և լեզվամտածողության համատեքստում: Ներկայացվել են ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի բարձրացմանն ուղղված տեխնոլոգիաներն ու դրանց կիրառման եղանակները: Որպես ուսումնասիրման օբյեկտ՝ ընտրվել են *քաղաքացիականությունը* բնութագրող բառ-խթաններ, որոշվել է դրանց հակազդումների փոփոխման շարժընթացը: Գիտափորձերին մասնակցել են հեռակա ուսուցման նույն ուսանողները 1-ին (2006թ.) և 4-րդ (2010թ.) կուրսերում: Յուրաքանչյուր ուսանողի առաջարկվել է հինգ բառախումբ՝ բաղկացած վեցական բառից: Յուրաքանչյուր բառախմբում կամայականորեն բաշխված հինգ բառերը վերը նշված հինգ հայտանիշներին առնչվող բառ-խթաններն են, իսկ վեցերորդ խթանն առաջարկվել է՝ իմաստային շղթաներ ձևավորելու հնարավորությունը բացառելու նպատակով: Համապատասխան բառ-խթանները բերված են գծ.2-ում:

Գիտափորձի տևողությունը կազմել է 5-10 րոպե: Ստացված տվյալների քանակական վերլուծության նպատակով հակազդումները խմբավորվել են ըստ իմաստային-բովանդակային դրսևորումների և գնահատվել հինգմիավորանոց համակարգով՝ 0, 1, 2, 3 և 4:




Գծ. 2. Գիտափորձում առաջարկված բառ-խթանները:

Առավելագույն՝ 4 միավոր ստացել են առավել խորքային, բովանդակային հակազդումները (*ընտանիք–խաղաղություն*): Ավելի մակերեսային, տիպական հակազդումներն ստացել են 3 միավոր (*մայրիկ-սիրելի*), հոմանիշները, հականիշները՝ 2 միավոր (*սար-լեռ*), բառախթանի քերականական որևէ ձևը՝ 1 միավոր (*գիրք-գրքի*): Հակազդման բացակայությունը գնահատվել է զրո միավոր: Հաշվի առնելով գիտափորձին մասնակցող ուսանողների տարիքային լայն տիրույթը (16-50)՝ 1-ին և 4-րդ կուրսերի ուսանողների խմբաքանակը տրոհվել է հինգ՝ (16-20) և (21-25), (21-25) և (26-30), (26-30) և (31-35), (31-35) և (36-40), (36-45)

և (41-50) տարիքային խմբերի, որոշվել է հակազդումների գնահատականների բաշխումը, կատարվել է (աղյ.2) համապատասխան քանակական վերլուծություն վերը նշված հինգ հայտանիշներից յուրաքանչյուրի համար: Որոշվել է յուրաքանչյուր տարիքային խմբի

Աղյուսակ 2

Աղյ. 2 *Հայրենասիրություն* հայտանիշի վերլուծության արդյունքները

| Արձագանքների գնահատականը | կուրս | Տարիքային խմբեր | | | | | $R_\alpha$ | $S_\alpha^2$ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | j = 1<br>16-20<br>(21-25)* | j = 2<br>21-25<br>(26-30) | j = 3<br>26-30<br>(31-35) | j = 4<br>31-35<br>(36-40) | j = 5<br>36-45<br>(41-50) | | |
| $\overline{P}_{\alpha,j}$, α = 1** | 1-ին | 0.268 | 0.625 | 0.125 | 0.313 | 0.050 | 0.276 | 0.039 |
| | 4-րդ | 0.342 | 0.536 | 0.750 | 0.364 | 0.250 | 0.448 | 0.031 |
| $\overline{P}_{\alpha,j}$, α = 2 | 1-ին | 0.307 | 0.413 | 0.413 | 0.719 | 0.275 | 0.425 | 0.025 |
| | 4-րդ | 0.211 | 0.446 | 0.453 | 0.602 | 1.000 | 0.542 | 0.068 |
| $\overline{P}_{\alpha,j}$, α = 3 | 1-ին | 0.526 | 0.500 | 0.488 | 0.531 | 0.400 | 0.489 | 0.002 |
| | 4-րդ | 0.408 | 0.554 | 0.750 | 0.534 | 0.656 | 0.580 | 0.013 |
| $\overline{P}_{\alpha,j}$, α = 4 | 1-ին | 0.516 | 0.588 | 0.525 | 0.531 | 0.450 | 0.522 | 0.002 |
| | 4-րդ | 0.789 | 0.857 | 0.594 | 0.511 | 0.719 | 0.694 | 0.016 |
| $\overline{P}_{\alpha,j}$, α = 5 | 1-ին | 0.284 | 0.400 | 0.550 | 0.563 | 0.425 | 0.444 | 0.011 |
| | 4-րդ | 0.461 | 0.554 | 0.531 | 0.591 | 0.406 | 0.509 | 0.004 |
| $R_j$ | 1-ին | 0.380 | 0.505 | 0.420 | 0.531 | 0.320 | 0.431 | 0.006 |
| | 4-րդ | 0.442 | 0.589 | 0.616 | 0.520 | 0.606 | 0.555 | 0.004 |

*Մասնակիցների տարիքային խումբը 4-րդ կուրսում: ** α = 1՝ անամպ երկինք, α = 2՝ մարտական շքանշան, α = 3՝ Եռաբլուր, α = 4՝ Ֆիդայի, α = 5՝անմահություն:

և բառ-խթանի միջին գնահատականը ($\bar{P}_{\alpha j}$), հաշվարկվել են դիտարկվող հայտանիշը բնութագրող գործակիցները ($R_j$) և տվյալ բառ-խթանի միջին գնահատականն ըստ կուրսերի ($R_\alpha$): Որոշվել են նաև յուրաքանչյուր բառ-խթանի գնահատականների միջին քառակուսային շեղումները ($S_\alpha^2$): Աղյ.2–ում, որպես օրինակ, բերված են *հայրենասիրություն* հայտանիշի վերլուծության արդյունքները: Ընդունելով, որ վերը նշված հինգ հայտանիշները հավասար ներդրում ունեն *քաղաքացիականության* մակարդակի ձևավորման գործընթացում՝ հաշվարկվել են համապատասխան քանակական բնութագրերը, որոշվել է ուսանողների *քաղաքացիականության* մակարդակի փոփոխման շարժընթացը լեզվազգացողության համատեքստում (գծ.3):




Գծ.3. Քաղաքացիականության մակարդակի փոփոխման շարժընթացը. ընդհատ գիծը 1-ին, հոծը՝ 4-րդ կուրսի տվյալները:

**Երրորդ ենթագլխում** ներկայացվում է առաջադրանքների համախումբ՝ բաղկացած որոշակի հաջորդական

քայլերից: Սովորողների լեզվազգացողության մակարդակը բարձրացնելու և ստուգումն ավելի դյուրին դարձնելու համար առաջադրանքները դասակարգվել են ըստ բարդության աստիճանի՝ պարզ, միջին բարդության և բարդ: Այսպիսի տրոհում կատարվել է՝ հիմք ընդունելով ընտրված բառերի (այդ թվում՝ գրաբարյան, նորաստեղծ, փոխառյալ ևն) գործածման հաճախականությունը:

Ուսանողների լեզվազգացողության մակարդակի բարձրացումն իրականացվել է համալիր դիդակտիկ տեքստերի միջոցով, դրա զարգացման շարժընթացի ուսումնասիրումն ու գնահատումը՝ ԲՋԳ մեթոդով, մաթեմատիկական մոդելավորման և ծրագրավորման համապատասխան միջոցներով: Լեզվազգացողության մակարդակի բարձրացման տեխնոլոգիաները մշակվել են հետևյալ հաջորդական քայլերով՝ 1) բառիմաստի ընկալման մակարդակի բարձրացում և գնահատում, 2) բառապաշարի հարստացում և գնահատում, 3) ասույթների, առած-ասացվածքների պաշարի հարստացում և գնահատում, 4) ոճական հմտությունների զարգացում և գնահատում: Տվյալների վերլուծության արդյունքները վկայում են, որ սեփական խոսքում լեզվական այս կամ այն միավորի կիրառման կարողությունների ձևավորումն ու զարգացումը պայմանավորված է հետևյալ գործոններով՝ *հարուստ բառապաշարի առկայություն, տարբեր իրավիճակներում դրանից օգտվելու կարողություն և կիրառման անձնական փորձ:*

**Չորրորդ ենթագլուխը** նվիրված է ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացմանն ուղղված տեխնոլոգիաների մշակմանն ու դրանց կիրառման արդյունավետության որոշմանը՝ հիմք ընդունելով ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի *տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա* մասնագիտության առկա ուսուցման 3–րդ կուրսում (27 ուսանող) իրականացված փորձարկման արդյունքները, ինչպես նաև նույն ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի ընթացքում իրականացված փորձարկումների վերջնարդյունքները:

Տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացմանն ուղղված՝ մեր կողմից առաջարկվող տեխնոլոգիաների կիրառումը նախագծվել և իրականացվել է եռաստիճան սխեմայով՝ *անցնել գործընթացի միջով՝ որպես սովորող, իմաստավորել այն սեփական փորձով՝ որպես ապագա ուսուցիչ, և ապա, հաշվի առնելով սեփական փորձը, կիրառել կենդանի մանկավարժական գործընթացում՝ որպես ուսուցիչ*:

Առաջարկվող տեխնոլոգիաների փորձարկումը բուհում իրականացվել է չորս փուլով. 1) *ուսանողների լեզվազգացողության նախնական մակարդակի որոշում ԲՋԳ մեթոդով,* 2) *լեզվազգացողության զարգացման տեխնոլոգիաների կիրառում,* 3) *գիտելիքների ստուգում տարբերակված թեստերով,* 4) *լեզվազգացողության մակարդակի կրկնակի որոշում ԲՋԳ մեթոդով:*

**Առաջին փուլում** կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ուսանողների լեզվազգացողության մակարդակները խիստ տարբեր են (աղյ.3), ուստի նպատահարմար էր կիրառել շերտավորված ուսուցման եղանակը՝ ուսանողներին բաժանելով հինգ ենթախմբի, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվել են լեզվազգացողության մոտավորապես նույն մակարդակն ունեցող 5-6 ուսանողներ:

**Երկրորդ փուլում** (տևողությունը՝ մեկ ամիս) գործնական պարապմունքների ընթացքում կիրառվել են լեզվազգացողության զարգացմանն ուղղված՝ մեր կողմից մշակված ուսումնական նյութերը, որոնք տարբերակվել են ըստ բարդության աստիճանի՝ պարզ, միջին բարդության և բարդ:

**Երրորդ փուլում** խմբային աշխատանքի միջոցով իրականացվել է գիտելիքների

ստուգում տարբերակված թեստերով: Ըստ որում, աշխատանքի 10-միավորանոց համակարգով գնահատման գործընթացին դասախոսի հետ մեկտեղ մասնակցել են նաև ուսանողները, ովքեր գնահատել են ինչպես իրենց (ինքնագնահատում), այնպես էլ մյուս խմբերի աշխատանքները: Վերջնական գնահատականը ձևավորվել է երեք բաղադրիչից՝ դասախոսի գնահատական (1-5 միավոր), ինքնագնահատական (1-2 միավոր), այլ խմբերի կողմից տրված (1-3 միավոր) միավորների միջին արժեք:

Նշենք, որ ինքնագնահատումը կատարվել է աշխատանքային թերթիկի վրա և հանձնվել դասախոսին նախքան խմբի կողմից կատարված աշխատանքը բանավոր ներկայացնելը: Այլ խմբերի գնահատումը կատարվել է խմբերի աշխատանքների ներկայացումից հետո, առանձին, նախապես բաժանված ձևաթերթիկների վրա: Վերջնական գնահատականները հաշվարկվել են և բարձրաձայնվել լսարանում: Կիրառվող տեխնոլոգիայի արդյունավետությունը որոշելու նպատակով հաշվարկվել է խմբի *վարկանշային գործակիցը* $\delta = \left(M\xi - \sqrt{D\xi}\right)/100$, որտեղ $M\xi = \frac{1}{N}\sum_{i=1}^{N} x_i$–ը և $D\xi = \frac{1}{N}\sum_{i=1}^{N} x_i^2 - (M\xi)^2$–ը, համապատասխանաբար, $\xi$ պատահական մեծության մաթեմատիկական սպասումն է և դիսպերսիան, իսկ $(x_1, x_2, \cdots x_N)$-ը խմբում ընդգրկված սովորողների՝ ԲՁԳ-ի արդյունքում ստացած միավորներն են (N–ը ուսանողների թվաքանակն է խմբում): Այնուհետև հաշվարկվել է խմբի *վարկանշային գնահատականը*՝ որպես խմբի վերջնական գնահատականի և *վարկանշային գործակցի* արտադրյալ:

**Չորրորդ փուլում** իրականացվել է ուսանողների լեզվազգացողության մակարդակի կրկնակի դիտարկում ԲՁԳ մեթոդով, և որոշվել են նոր վարկանշային գործակիցները, ինչն էլ թույլ է տվել եզրահանգումներ կատարել կիրառվող տեխնոլոգիաների արդյունավետության մասին:

Աղյ. 3–ում բերված տվյալները ցույց են տալիս, որ մեկամսյա պարապմունքների արդյունքում ուսանողների լեզվազգացողության մակարդակը և խմբերի վարկանշային գործակիցներն աճել են, ինչը ևս վկայում է առաջարկվող տեխնոլոգիաների արդյունավետության մասին: Ըստ որում, նախնական ցածր վարկանշային գործակից ունեցող խմբում ներգրավված ուսանողների լեզվազգացողության մակարդակն ավելի ինտենսիվ է աճել: Այս հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ առաջարկվող տեխնոլոգիաների շարունակական կիրառումը (ամեն անգամ կազմավորելով ուսանողների նոր խմբեր՝ հիմք ընդունելով նախորդ փուլի վերջում կատարված ԲՁԳ-ի արդյունքները) կհանգեցնի ուսանողների լեզվազգացողության անընդհատ զարգացման՝ դրանց մակարդակները խտացնելով ինչ–որ նիշի շուրջ, որը, թերևս, պայմանավորված կլինի դասավանդողի լեզվազգացողության մակարդակով:

Առաջարկվող տեխնոլոգիաների արդյունավետության մասին ավելի հավաստի և խորքային տեղեկություններ ստանալու նպատակով կատարվել է ևս մեկ քայլ՝ պարզելու՝ կարող է արդյոք մշակված տեխնոլոգիաներով նախապատրաստված ուսանողը, տեղայնացնել դրանք և արդեն որպես սովորեցնող՝ ուսուցիչ, կիրառել դրանք դպրոցում: Այն իրականացվել է մանկավարժական պրակտիկայի ընթացքում երրորդ կուրսի մի խումբ ուսանողների կողմից: Ըստ որում, հիմնական շեշտը դրվել է ուսանողների՝ ԲՁԳ մեթոդով աշխատելու գործնական կարողությունների զարգացման վրա: Նրանք որոշել են տարրական դասարանների աշակերտների լեզվազգացողության մակարդակը նկարագրող հայտանիշները, ընտրել են համապատասխան բառ-խթաններ Մայրենի-1, Մայրենի-2 դասագրքերից, յուրացրել ԲՁԳ-ի արդյունքների մշակման ու վերլուծության եղանակները և կազմել տարրական դասարանների ուսումնական ծրագրերից բխող տարբերակված

առաջադրանքներ (աղյ.3)։ Առաջարկվող տեխնոլոգիաների փորձարկումն ուսանողների կողմից իրականացվել է Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 դպրոցի երեք՝ IIIᵃ (15 աշակերտ), IIIᵇ (21 աշակերտ) և IIIᵍ (25 աշակերտ) դասարաններում։

Աղյուսակ. 3

Ուսանողների լեզվազգացողության մակարդակի փոփոխման շարժընթացը

| Ուսանողների № | I ԲՋԳ | | Գնահատման մեթոդիկա | | | | Վարկանիշային գնահատական | II ԲՋԳ | | փոփոխությունը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գնահատական | Խմբի վարկանիշ | Ինքնա գնահատական | Այլ խմբերի գնահատ. | Դասախոսի գնահատական | Վերջնական գնահատական | | գնահատական | Խմբի վարկանիշ | Անհատա - կան | խմբային |
| 1 | 20 | | | 12 | | | | 28 | | 8 | |
| 2 | 22 | | | 23 | | | | 33 | | 11 | |
| 3 | 32 | | | | | | | 37 | | 5 | |
| 4 | 38 | 0.24 | 1 | 2 | 4 | 7 | 1.7 | 42 | 0.32 | 4 | 0.08 |
| 5 | 39 | | | | | | | 43 | | 4 | |
| 6 | 39 | | | | | | | 43 | | 4 | |
| 7 | 42 | | | 3213 | | | | 45 | | 3 | |
| 8 | 44 | | | | | | | 47 | | 3 | |
| 9 | 44 | 0.43 | 1 | 2.25 | 4 | 7.25 | 3.1 | 47 | 0.46 | 3 | 0.03 |
| 10 | 46 | | | | | | | 49 | | 3 | |
| 11 | 47 | | | | | | | 52 | | 5 | |
| 12 | 51 | | | 2323 | | | | 55 | | 4 | |
| 13 | 53 | | | | | | | 57 | | 4 | |
| 14 | 55 | 0.52 | 2 | 2.5 | 5 | 9.5 | 4.9 | 58 | 0.56 | 3 | 0.04 |
| 15 | 55 | | | | | | | 59 | | 4 | |
| 16 | 56 | | | | | | | 59 | | 3 | |
| 17 | 58 | | | | | | | 62 | | 4 | |
| 18 | 63 | | | 3323 | | | | 67 | | 4 | |
| 19 | 66 | | | | | | | 71 | | 5 | |
| 20 | 69 | 0.65 | 2 | 2.75 | 5 | 9.75 | 5.8 | 74 | 0.69 | 5 | 0.04 |
| 21 | 70 | | | | | | | 76 | | 6 | |
| 22 | 73 | | | | | | | 76 | | 3 | |
| 23 | 77 | | | 3323 | | | | 82 | | 5 | |
| 24 | 78 | | | | | | | 85 | | 7 | |
| 25 | 78 | 0.76 | 1 | 2.75 | 5 | 8.75 | 6.65 | 85 | 0.83 | 7 | 0.07 |
| 26 | 82 | | | | | | | 88 | | 6 | |
| 27 | 88 | | | | | | | 92 | | 4 | |

Որոշվել է աշակերտների լեզվազգացողության նախնական մակարդակը, կատարվել ԲՋԳ-ի արդյունքների քանակական վերլուծություն, ինչի հիման վրա յուրաքանչյուր դասարանում աշակերտները բաժանվել են խմբերի՝ խմբային աշխատանք

կազմակերպելու նպատակով: Հարկ է նշել, որ աշխատանքային խմբերի ձևավորման այս եղանակը. 1) ապահովում է հավասար պայմաններ խմբի յուրաքանչյուր անդամի համար, 2) նվազեցնում է աշակերտի կողմից խմբի այլ անդամի արդյունքից օգտվելու հնարավորությունը, 3) բարձրացնում է աշակերտների ակտիվությունը, 4) ապահովում է

Աղյուսակ 4.

1-ին և 2-րդ ԲԶԳ–ի արդյունքները և խմբերի կառուցվածքը

| Աշակերտ-ների № | Առաջին ԲԶԳ | | | | | | Երկրորդ ԲԶԳ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 3 ա | | 3 բ | | 3 գ | | 3 ա | | 3 բ | | 3 գ | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | 18 | | 44 | | 17 | | 27 | 0.32 | 55 | 0.56 | 36 | 0.42 |
| 2 | 41 | 0.23 | 49 | 0.45 | 38 | | 52 | | 62 | | 55 | |
| 3 | 56 | | 50 | | 44 | 0.27 | 60 | | 64 | | 56 | |
| 4 | 62 | | 54 | | 49 | | 65 | 0.66 | 66 | 0.67 | 58 | |
| 5 | 64 | 0.62 | 54 | 0.54 | 49 | | 68 | | 67 | | 64 | 0.65 |
| 6 | 65 | | 61 | | 53 | | 68 | | 71 | | 66 | |
| 7 | 66 | | 61 | | 57 | | 70 | 0.7 | 72 | | 69 | |
| 8 | 68 | 0.67 | 64 | | 57 | 0.54 | 71 | | 75 | | 69 | |
| 9 | 70 | | 65 | 0.64 | 60 | | 73 | | 78 | 0.78 | 73 | |
| 10 | 73 | | 65 | | 63 | | 76 | 0.76 | 79 | | 76 | 0.76 |
| 11 | 76 | | 69 | | 63 | | 76 | | 79 | | 78 | |
| 12 | 76 | | 71 | | 64 | 0.63 | 77 | | 79 | | 78 | |
| 13 | 76 | 0.75 | 72 | 0.70 | 64 | | 78 | 0.78 | 84 | 0.84 | 80 | 0.8 |
| 14 | 78 | | 72 | | 65 | | 80 | | 84 | | 80 | |
| 15 | 86 | | 73 | 0.74 | 67 | | 86 | | 84 | | 80 | |
| 16 | | | 75 | | 67 | 0.67 | | | 85 | | 82 | |
| 17 | | | 75 | | 68 | | | | 85 | 0.85 | 83 | 0.83 |
| 18 | | | 76 | | 69 | 0.69 | | | 85 | | 83 | |
| 19 | | | 77 | | 69 | | | | 85 | | 84 | |
| 20 | | | 78 | 0.77 | 72 | | | | 86 | | 84 | |
| 21 | | | 81 | | 72 | | | | 89 | | 86 | 0.86 |
| 22 | | | | | 74 | 0.75 | | | | | 86 | |
| 23 | | | | | 76 | | | | | | 87 | |
| 24 | | | | | 76 | | | | | | 87 | |
| 25 | | | | | 76 | | | | | | 88 | |

յուրաքանչյուր աշակերտի լեզվազգացողության մակարդակի շարունակական բարձրացումը:

Ուսանողները յուրաքանչյուր դասարանում անցկացրել են երեքական խմբային աշխատանք՝ օգտագործելով նախապես կազմված տարբերակված առաջադրանքները: Առաջին խմբային աշխատանքում ներառվել են *ուղղագրական* և *բառակազմական,* երկրորդում՝ *ուղղագրական, բառակազմական* և *իմաստաբանական*, իսկ երրորդում՝ նաև *շարահյուսական բնույթի առաջադրանքներ:* Ընդ որում, պարզ, միջին բարդության և բարդ

առաջադրանքները կիրառվել են համապատասխանաբար մինչև 0.5, 0.5-ից - 0.65 և 0.65-ից բարձր վարկանշային գործակից ունեցող խմբերում: Աշակերտների գնահատումը կատարվել է նույն եղանակով, ինչով որ ուսանողներինը: Արդյունքները բերված են աղյ.4–ում: Երևում է, որ ցածր վարկանշային գործակից ունեցող խմբերի գնահատականները բարձրացել են: Այսպես, III$^{ա}$ դասարանի I խումբը (վարկանշային գործակիցը՝ $\delta = 0.23$) առաջին աշխատանքի համար ստացել է 6 միավոր, երկրորդի համար՝ 8, երրորդի համար՝ 9 միավոր: Ինչ վերաբերում է ավելի բարձր վարկանշային գործակից ունեցող խմբերին, ապա նրանք պահպանել կամ բարելավել են գնահատականները:

Գնահատականների փոփոխման այսպիսի շարժընթացը հուշեց երկրորդ ԲԶԳ-ի անցկացման անհրաժեշտությունը: Խմբերը վերավարկանշավորելուց և վերաձևավորելուց հետո կազմակերպվել և անցկացվել է հաջորդ խմբային աշխատանքը վերը նկարագրված եղանակով: Տրամ.1–ում պատկերված են փորձարկվող դասարանների՝ 1-ին և 2-րդ ԲԶԳ-ի արդյունքներով ստացված վարկանշային գործակիցները: Ինչպես երևում է, մի կողմից՝ աճել են միևնույն դասարանի խմբերի վարկանշային գործակիցները, մյուս կողմից՝ նվազել է գործակիցների միջև եղած տարբերությունը:




Տրամագիր.1 Աշխատանքային խմբերի վարկանիշային գործակիցների փոփոխման շարժընթացը. Ա) առաջին և Բ) երկրորդ գիտափորձերից հետո

Այսպիսով, կարող ենք փաստել, որ՝ 1. լեզվազգացողության մակարդակի բարձրացման բազմագործոն տեխնոլոգիաների կիրառումը ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետում, իսկ նախնական պատրաստություն անցած ուսանողների կողմից՝ տարրական դպրոցում, նպաստում է սովորողների՝ ուսանողների, աշակերտների լեզվազգացողության զարգացմանն ու դրա մակարդակի աստիճանական ուղղորդված բարձրացմանը: 2. Ուսանողները յուրացրել և հաջողությամբ կիրառել են մշակված տեխնոլոգիաները տարրական դպրոցում՝ կենդանի մանկավարժական գործընթացում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ապագա ուսուցչի աշխարհընկալումը, արժեհամակարգի ձևավորումը, հաղորդակցական կոմպետենցիաները և ստեղծագործական կարողությունները մեծապես պայմանավորված են նրա լեզվազգացողության մակարդակով:
2. ԲԶԳ մեթոդը լեզվազգացողության հետազոտման արդյունավետ գործիք է. այն թույլ է տալիս հետազոտման գործընթացում կիրառել քանակական վերլուծության մեթոդները՝

- որոշել լեզվազգացողության մակարդակի քանակական բնութագրերը,

- հետազոտել լեզվազգացողության զարգացման շարժընթացը:

3. Լեզվազգացողության մակարդակի բարձրացմանն ուղղված տեխնոլոգիաների կիրառման մոդելի ներդնումը տարրական դասարանների ապագա ուսուցչի պատրաստման գործընթացում խթանում է լեզվազգացողության մակարդակի աստիճանական բարձրացումը:
4. Լեզվազգացողության զարգացմանն ուղղված տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ապագա ուսուցիչները ձեռք են բերում նաև այդ տեխնոլոգիաներն արդյունավետ կիրառելու գործնական կարողություններ:
5. Ապագա ուսուցչի կողմից նշված տեխնոլոգիաների կիրառումը տարրական դասարաններում խթանում է աշակերտների լեզվազգացողության մակարդակի աստիճանական բարձրացումը:

**Ատենախոսության արդյունքները զետեղված են հետևյալ աշխատանքներում.**


1. **Աղաբաբյան Կ.Հ., Սարգսյան Ա.Վ.,** Արևմտահայերենի ծրագրային ուսուցման առանձնահատկությունները դպրոցական դասընթացում, ՄԳԱ, գիտական հոդվածաշար, Երևան, 2004, հ.3, էջ 120 – 124:
2. **Աղաբաբյան Կ.Հ.,** Միջակետի գործածությունը, Հայոց լեզու և գրականություն, 2005, 1-2, էջ 126 – 127:
3. **Աղաբաբյան Կ.Հ.**, **Սարգսյան Ա.Վ.**, Լեզվական հենքային գործիմացությունների ձևավորումը զուգորդությունների կիրառման միջոցով (լեզուների ուսուցման գործընթացում), Միջ. գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 163 -167:
4. **Աղաբաբյան Կ.Հ.,** Դերբայական դարձվածով արտահայտված երկրորդական անդամների տրոհումը, ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, 2008, Հ.3-4, էջ 11-14:
5 **Աղաբաբյան Կ.Հ.,** Սովորողների լեզվական մտածողության հետազոտումը ազատ զուգորդությունների գիտափորձի մեթոդով, Խ. Աբովյանի ծննդյան 200 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 266-268:
6. **Աղաբաբյան Կ. Հ.,** Լեզվական մտածողության զարգացման ընթացքի ուսումնասիրումը, ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, 2011, N 2-3, էջ 218-223:
7. **Ջիջյան Ռ.Զ., Աղաբաբյան Կ.Հ.**, Ուսանողների լեզվազգացողության զարգացման խնդիրները արդի պայմաններում, ՀՊՄՀ, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, Զանգակ, 2013, 1, էջ 161-171:
8. **Վարդումյան Ս.Տ., Աղաբաբյան Կ.Հ.**, Տարրական դպրոցի ապագա ուսուցչի լեզվազգացողության հետազոտման տեխնոլոգիաները, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, Զանգակ, 2013, 3, էջ 81-85:
9. **Агабабян К. А.,** Определение динамики развития чувства языка учащихся вузов методом ассоциативного эксперимента, Труды II Международной научно-практической конф. *Актуальные научные исследования в современном мире,* Переяслав-Хмельницкий, Украина, 2015, с. 19-24.

АГАБАБЯН КАРИНЕ АКОПОВНА

# ТЕХНОЛОГИИ РАЗВИТИЯ ЧУВСТВА ЯЗЫКА СТУДЕНТОВ В ПЕДАГОГИЧЕСКИХ ВУЗАХ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогиюеских наук по специальности 00.02- «Методика преподавания и воспитания» (армянский язык). Защита диссертации состоится 17 марта 2016 г. в $12^{00}$ на заседании специализированного совета «Педагогика» 020 ВАК по прислувению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меци 17

## РЕЗЮМЕ

**Актуальность исследования.** Одной из важнейших стратегических целей реформы образования, осуществляемой в нашей стране, является подготовка разносторонне развитых специалистов, постоянно стремящихся к самосовершенствованию и способных быстро ориентироваться в условиях меняющихся реалей нашего мира. Это предполагает первоочередное решение ряда важнейших задач образовательного процесса, одной из которых, безусловно, является создание условий и выработка методов обучения, обеспечивающих непрерывное развитие чувства языка (ЧЯ) учащихся, что в свою очередь стимулирует развитие творческого, аналитического мышления студентов, навыков самостоятельного приобретения теоретических знаний и их применения на практике.

Находясь в постоянном контакте с учениками, учитель должен в совершенстве владеть родным языком, грамотно и аргументированно излагать мысли, уметь силой красноречия увлечь аудиторию, привить любовь к родному языку и стремление к познанию оттенков письменной и устной речи. Становление этих навыков у будущих учителей возможно через развитие ЧЯ в процессе их обучения.

Начало последовательного исследования особенностей проявлений ЧЯ было положено в начале прошлого века, в основном, европейскими и американскими учеными. Однако приходится констатировать, что должного внимания проблемам ЧЯ армянскими исследователями не оказано и до сих пор детальные комплексные исследования ЧЯ в армянской научной мысли отсутствуют.

Диссертация посвящена комплексному исследованию процессов формирования и развития ЧЯ, разработке многофакторных технологий (МФТ), стимулирующих перманентное развитие ЧЯ будущих учителей начальных классов в процессе их обучения.

**Целью исследования** является выявление и определение уровня ЧЯ будущего учителя начальных классов, разработка МФТ технологий развития ЧЯ, апробация и обоснование их эффективности в процессе обучения студентов.

**Задачи исследования:**

1. Анализ представленных в научно-методической литературе теоретических основ ЧЯ, его основных проявлений и механизмов развития в процессе обучения;
2. Определение уровня ЧЯ будущих учителей начальных классов методом словесного ассоциативного эксперимента (САЭ);
3. Разработка МФТ развития ЧЯ будущих учителей начальных классов;
4. Апробация разработанных МФТ в процессе подготовки будущих учителей начальных классов;
5. Определение уровня развития развития ЧЯ бущих учителей начальных классов в результате применения разработанных МФТ.

6. В процессе педагогической практики проверить умение будущих учителей применять предложенные МФТ в живом педагогтческом процессе в начальной школе.
7. Проверить уровень развития ЧЯ учащихся начальных классов в результате применения будущими учителями предложенных МФТ в начальной школе.

**Научная новизна исследования:**

Впервые в армянской действительности

- уточнено определение ЧЯ;
- разработана модель применения технологий повышения уровня ЧЯ;
- применен метод АСЭ для определения уровня ЧЯ будущих учителей начальных классов;
- разработаны и апробированы МФТ развития ЧЯ в процессе подготовки учителей начальных классов;
- разработанные МФТ развития ЧЯ апробированы в начальной школе;
- проведен качественный и количественный анализ динамики развития ассоциативно-семантических полей учащихся.

**Теоретическая значимость исследования.** Анализ результатов применения МФТ, способствующих развитию ЧЯ, дополняет существующие теоретические концепции в области методики преподавания армянского языка. Закономерности и характерные особенности, выявленные в результате исследования, могут быть использованы в теоретических исследованиях в области лингвистики, психологии, лингвофилософии и т.д.

**Практическая значимость исследования**

1. Предложенные МФТ могут быть применены:

- в высших учебных заведениях при подготовке и переподготовке педагогических кадров, обеспечивая

а) пошаговое повышение уровня ЧЯ студентов,

б) повышение эффективности педагогической практики;

- в общеобразовательных учреждениях, что будет способствовать развитию ЧЯ, языкового мышления и коммуникативных компетенций учащихся.

2. Предложенные МФТ развития ЧЯ могут лечь в основу разработки и внедрения в педагогические вузы спецкурсов/семинаров и предметов по выбору студентов.
3. Данные, полученные на основе метода САЭ, могут служить базовым материалом для создания словаря ассоциативных норм армянского языка

**Экспериментальная база исследований**: эксперименты проведены

- на факультете начального образования АГПУ,
- на факультете математики, физики и информатики АГПУ,
- в средней школе № 119 имени Б. Жамкочяна, г. Ереван.

10. **Апробация результатов исследования**. Результаты исследования систематичеки были представлены на научных конференциях АГПУ им. Х. Абовяна (2007, 2010г.), на II межд. научно-практ. конф. *Актуальные научные исследования в современном мире,* Украина (2015г), на. семинаре кафедры развития и прикладной психологии (2014г.), на научно-метод. семинарах кафедры родного языка и методики его преподавания (2011 - 2014 гг.)

**Содержание и объем работы**. Диссертация состоит из введения, трех глав, заключения и литературы. Она содержит 13 таблиц и 8 рисунков и 1 гистограмму. Общий объем составляет 137 страниц. Основные результаты исследования опубликованы в 6 научных статьях и в 3 сборниках трудов научных конференций.

KARINE H. AGHABABYAN

# TECHNOLOGIES OF DEVELOPMENT OF STUDENTS' SENSE OF LANGUAGE IN PEDAGOGICAL HIGHER EDUCATIONAL INSTITUTIONS

*Thesis submitted for the Degree of Candidate of Pedagogical Sciences,*
*Specialty Field: 00.02 "Teaching and Education Methodology".*
The thesis defence will be held on 17 march, 2016 at $12^{00}$ at the session of
Specialized Council 00.02 of Higher Attestation Commission,
Khachatur Abovian Armenian State Pedagogical University
Address: : 0010, Tigran Mets 17, Yerevan

## *SUMMARY*

**The relevance of research.**

One of the essential aims of educational reforms implemented in our country is to train multifaceted specialists heading for self-enhancement and agile in self-orientation under the changing circumstances of nowadays' reality. It assumes priority solutions to a series of significant tasks in educational processes, with special stress on the development and provision of respective conditions and teaching methodology aimed at persistent development of sense of language (SL) among students which, in its turn, stimulates the development of students' both creative and analytical thinking, as well as, the respective skills of independent acquisition autonomous selfachievment of theoretical knowledge, and their practical application.

For a teacher – in constant contact with students – the advanced knowledge of native language is a fundamental necessity, enabling to produce correct and argument-based, eloquent speech enough to attract public attention, inspire fondness towards native language, and aspiration to uncover written and oral language overtones. The SL is crucial for the development of the above-mentioned skills among pre-service teachers.

The premises of consecutive research of the peculiarities of expression of SL were laid at the beginning of the 20th century, mainly, by European and American scholars. However it must be stated that pertinent studies of the subject matter have not been properly carried out in Armenia yet, and so far there are no detailed and multifarious investigation in this sphere.

The present thesis dwells on an intricate research of the process of development and progress of SL; multifactor technologies (MFT) boosting a permanent development of the SL; respective grounding of their efficiency in the course of teaching / learning.

**The aim of the research:**

1. To analyze scientific-methodological literature on theoretical premises of SL, the major expressions of SL and the mechanisms of development in the course of teaching/learning;
2. To design MFT of development of SL among primary school teacher students;
3. To detect the SL level among primary school future teachers teacher students via verbal associative experiment (VAE);
4. To approbate MFT designed determining their efficiency in the course of primary school teacher training;
5. To foster the models of primary school teacher training accomplished within the aim of the

above mentioned MFT during pedagogical internship and with prior adjustment in a line with a primary school curriculum;

6. To motivate the efficiency of MFT reckoned at the end of pedagogical internship.
7. To estimate the development level of primary school pupils' SL as a result of using the MFT by future teachers in primary school.

**The scientific novelty of the research:**

for the first time in the Armenian reality

- It is clarified the definition of SL;
- It is designed the application model for technologies to increase the level of SL;
- the VAE method has been applied to detect SL among primary school teacher students;
- It's the first attempt to design and attest the SL development level via MFT in the course of primary school teacher training;
- The SL development level MFT have been tested at primary school level;
- It comprises the first attempt to carry out both qualitative and quantitative analyses of the dynamics of development of associative semantic fields of students.

**The theoretical value of the research.**

Analysis of results of MFT promoting SL complements the existing theoretical concepts in the field of Armenian language teaching methodology. Regularities and characteristics identified as a result of the research can be used in theoretical studies in the fields of linguistics, psychology, lingvophilosophy, etc.

**The practical value of the research:**

1. The MFT suggested might be applied in the following fields:

- In higher educational institutions, particularly in teacher training, providing therefore:

a) Stepwise increase of future teachers' student teachers' level of SL,

b) High-level efficiency of pedagogical internship.

- In public school sector for developing the sense of language, language thinking and communicative competences among school students.

2. The data collected on the basis of VAE might be useful as a major source for compiling a dictionary of associative norms of the Armenian language.

**The experiment based research:** the respective experiments have been conducted:

✓ in the faculty of Primary Education, ASPU,
✓ in the faculty of Mathematics, Physics and Informatics, ASPU,
✓ at Yerevan B. Zhamkochyan secondary school N119.

**Testing results of the research:** the results of the research have been tested and introduced on regular basis at ASPU (2007, 2010), at II international scientific-practical conf. "Actual research in the modern world", Ukraine (2015), at scientific and methodological seminar at the chair of Developmental and Applied Psychology (2014), at scientific and methodological seminars held at the chair of Armenian as Native Language and its Teaching Methodology (2011 – 2014).

**The content and the volume of the research.**

The thesis is compiled of Introduction, three chapters, Conclusions and Bibliography. It also comprises 13 tables and 8 pictures and 1 histogram. The overall volume of the research consists of 137 pages.

The main results of the research have been published in 6 scientific papers, and introduced at 3 scientific conferences.